

**ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔ**

Համայնքի 2018 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Գագիկ Սահակյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 12-ի թիվ 10-Ա որոշմամբ

ՍՊԻՏԱԿ 2018թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	4
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)	8
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2018Թ. ԾՐԱԳԻՐԸ.....	42
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ.....	49
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ	525

Ներածություն

Սպիտակ համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- համակարգել Սպիտակ համայնքի ղեկավարի և ավագանու տվյալ տարվա անելիքները,
- սահմանել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատել ներքին ռեսուրսները, հաշվառել համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկել համախառն ռեսուրսները և բացահայտել պակասուրդը (դեֆիցիտը),
- համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող ծրագրերը և միջոցառումները ՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման մոնիթորինգի և գնահատման պլանը:

Սպիտակ համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

1-ին բաժնում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

2-րդ բաժնում ներկայացվում է համայնքի 2018 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

3-րդ բաժնում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը:

4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Համայնքի տեսլականը՝

Սպիտակը՝ կայուն զարգացող, բարեկեցիկ, մաքուր, բարեկարգ, գրավիչ և էներգաարդյունավետ համայնք է։ Համայնքում կրթական, մշակութային և մարզական հաստատությունները համայնքի բնակիչների համար դարձել են առավել մատչելի և որակյալ, երիտասարդության ժամանցի կազմակերպման համար ստեղծվել են հարմար պայմաններ, համայնքի բնակիչներն ունեն բարելավված կենցաղային և բնակարանային պայմաններ, բոլոր փողոցները ապահովված են արդիականացված լուսավորության համակարգերով, համայնքային ենթակայության շենքերը և բազմաբնակարան բնակելի շենքերը էներգաարդյունավետ են, համայնքում օգտվում են ժամանակակից այլընտրանքային ջեռուցման համակարգերից, համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների կառավարումը բաց է ու թափանցիկ, բնակիչները մասնակից են ՏԻՄ որոշումների կայացմանը։

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	44,68	25,48
Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	53,21	57,58
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	32,5	34,7
Բնակչության զբաղվածության աճ (մարդ)	73	82
Գործազրկության մակարդակի նվազում %	7,5	7,7
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	17 217	17 230

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ապահովել տեղական ինքնակառավարման իրականացումը Սպիտակ համայնքում, ունենալ բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցման արդյունավետ, մասնագիտացված, նպատակային և թափանցիկ համակարգ	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, %	80	90
	Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, %	4	5
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների կազմում, %	32,55	34,71

Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
Նպաստել հայրենիքի պաշտպանության մակարդակի բարձրացմանը:	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանի վարումը, այո/ոչ	այո	այո
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
2018 թվականին արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
Իրականացնել քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցումը	Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, %	30	40
Ոլորտ 5. Հողօգտագործում			
Համայնքի ավագանու համաձայնությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի օտարում կամ օգտագործման տրամադրում	Բյուջեի եկամուտների համալրում, %	1	1,12
	Աջակցություն բիզնեսին %	3	3.8
Ոլորտ 6. Տրանսպորտ			
Բարելավել համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը	Բարեկարգ ներբնակավայրային փողոցների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	15	30
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
2018 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-	-
Ոլորտ 8. Կրթություն			
Ապահովել համայնքի բնակչությանը կրթական չափորոշիչներին համապատասխան նախադպրոցական և արտադպրոցական կրթության որակյալ ծառայությունների մատուցումը և ընդլայնումը	1.Նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների գործունեությունից, մատուցվող ծառայությունների որակից բնակչության	Լավ	Շատ լավ

	բավարարվածությունը (հարցումների հիման վրա)		
	2.Արտադրողական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %	20	21
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
Կազմակերպել և աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը, խթանել մշակութային միջոցառումներին երիտասարդների ակտիվ մասնակցությունը:	Բնակչության բավարարվածությունը Սպիտակի քաղաքային գրադարան» և «Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ների գործունեությունից (հարցումների հիման վրա)	բավարար	լավ
	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին %	55	60
	Երիտասարդության նախաձեռնությունների արդյունքում կայացած միջոցառումների տեսակարար կշիռը միջոցառումների ընդհանուր թվի մեջ,%	15	20
	Տարվա ընթացքում գրադարանի ծառայություններից օգտված բնակիչների թվի տեսակարար կշիռը համայնքում փաստացի բնակվող բնակիչների ընդհանուր թվի մեջ, %	19	20
	Տարվա ընթացքում թանգարան այցելած բնակիչների տեսակարար կշիռը համայնքում փաստացի բնակվող բնակիչների ընդհանուր թվի մեջ, %	25	26
Ոլորտ 10. Առողջապահություն			
2018 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
Նպաստել համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը	Առողջ ապրելակերպի ամրապնդում, բակային սպորտի զարգացում	բավարար	լավ
Ոլորտ 12. Սոցիալական			

պաշտպանություն			
Ապահովել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրերի շարունակականությունը և հստակեցնել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը:	Սոցիալական ծրագրերից շահառուների բավարարվածությունը	ավելի շատ լավ, քան վատ	լավ
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
2018 թվականի ընթացքում գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել			
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-	-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-	-
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
2018 թվականի ընթացքում զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2018 թվականի ընթացքում նախատեսվում է ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության ապահովում՝ համայնքի ավագանու նիստերի հեռարձակում, բնակչության մասնակցություն հանրային լուսմաներին, ՏԻՄ-երի իրավական ակտերի հրապարակում, հարկ վճարողների համար գույքային հարկերի (գույքահարկ, հողի հարկ) հաշվառման համակարգի հասանելիության ապահովում	ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության ապահովում,%	70	80

Համայնքի 2018 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում	120 864.3	-
Ընդամենը		120 864.3	-
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
1.	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանի վարում	Ներառված է ընդհանուր ոլորտի ծախսերի մեջ	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
1.	2018 թվականին արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Ալ.Մանուկյան փողոց, թիվ 1,2,3,4,5,6,7,8,9,10, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 17, 17/1,17/2, 15/1 և 15/2, բազմաբնակարան շենքերի ջերմաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ և տանիքների արդիականացում, Շահումյան փողոց, թիվ 7 հասցեում ֆոտովոլտային կայանի կառուցում	341 932,0	-
2.	Մշակույթի տան վերանորոգում, գազատարի կառուցում	81 784,0	-
3.	Ս.Ավետիսյան փողոց 17 բազմաբնակարան բնակելի շենքի բակի ասֆալտապատում, ջրահեռացում և լուսավորության համակարգերի կառուցում Ս.Ավետիսյան փողոց 19Ա և 19Բ բազմաբնակարան բնակելի շենքերի բակի բարեկարգում, հենապատերի կառուցում և ասֆալտապատում Այգեստան 2 թաղամասի (Վարդանանց հիմնական դպրոցի հարևանությամբ) փողոցի ասֆալտապատում	45822.2	-
4.	Մարգարյանցի հին մասնաշենքի վերանորոգում	27 921,593	
5.	Սպիտակ համայնքի քաղաքային զբոսայգու հուշարձանի և բեմի հանդերձարանի վերանորոգում	3 000,0	
6.	Աղբահանության աշխատանքներ	18 277,0	

7.	Սանիտարական մաքրման աշխատանքներ	22 100,0	
8.	Ձմեռային մաքրման աշխատանքներ	5 000,0	
9.	Աղբարկղների ձեռքբերում	960,0	
10.	Քրոք Քրքորյան փողոցի, Էստոնական և Այգեստան 2 թաղամասերի կոյուղագծերի կառուցում	24 994,09	
11.	Փողոցային լուսավորության համակարգերի սպառած էլեկտրաէներգիայի վարձավճարների վճարում	6 200,0	
12.	Փողոցային լուսավորության համակարգերի լամպերի փոխարինում	300, 0	
13.	Բազմաբնակարան բնակելի շենքերի սպասարկում	18 631,4	
14.	Թափառող կենդանիների վնասագերծում	280,0	
Ընդամենը		597 202,2	
Ոլորտ 5. Հողօգտագործում			
	Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի օտարում	Ներառված է ընդհանուր ոլորտի ծախսերի մեջ	-
Ոլորտ 6. Տրանսպորտ			
1.	Այգեստան թաղամասի ջրմուղ տանող փողոցի ասֆալտապատում	25 000,0	
2.	Սպիտակ համայնքի Բանավան թաղամասում երկու կանգառների կառուցում	1 200,0	
Ընդամենը		26 200,0	
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
	2018 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 8. Կրթություն			
1.	Համայնքում կրթական չափորոշիչներին համապատասխան նախադպրոցական կրթության ապահովում և ընդլայնում, նախադպրոցական կրթության և դաստիարակության ծառայությունների մատուցում	61 839.7	
2.	Համայնքում կրթական չափորոշիչներին համապատասխան արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում	55 829.1	
Ընդամենը		117 668,8	-
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
1.	Համայնքի բնակչությանը մշակութային ծառայությունների մատուցում, երիտասարդության ազատ ժամանցի նպատակային և արդյունավետ կազմակերպում	32 283.4	-
Ընդամենը		32 283.4	-
Ոլորտ 10. Առողջապահություն			
	2018 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			

1.	Համայնքի բնակչության շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական միջոցառումների կազմակերպման աջակցում	300.0	
Ընդամենը		300.0	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
1.	Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին և անձանց սոցիալական աջակցության տրամադրում	3 100,0	
2.	Ծրագիր 2 «Առաքելություն Հայաստան» - ԲՀԿ-ի կողմից սոցիալ- առողջապահական ծառայությունների մատուցման աջակցություն	2 800,0	
Ընդամենը		5 900.0	-
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
	2018 թվականին գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
	2018 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
1.	2018 թվականի ընթացքում զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
1.	2018 թվականի ընթացքում նախատեսվում է ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության ապահովում՝ համայնքի ավագանու նիստերի հեռարձակում, բնակչության մասնակցություն հանրային լուծումներին, ՏԻՄ-երի իրավական ակտերի հրապարակում, հարկ վճարողների համար գույքային հարկերի (գույքահարկ, հողի հարկ) հաշվառման համակարգի հասանելիության ապահովում	Ներառված է ընդհանուր ոլորտի ծախսերի մեջ	-
Ընդամենը		-	-
Ընդհանուրը		1 021 283,09	-

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/ h	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Այգեստան թաղամաս քաղաքային գրոսայգի տանող ճանապարհի ասֆալտապատում, ջրահեռացման և լուսավորության համակարգերի կառուցում	63 363,895	
2.	Այգեստան թաղամասի ջրմուղ տանող փողոցի ասֆալտապատում	37 716,18	
3.	Գործարանային թաղամասում գտնվող նախկին շաքարի գործարանի տարածքի բարեկարգում	70 000,0	
4.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	40 000,0	
5.	Մշակույթի տան տանիքում ֆոտովոլտային համակարգի տեղադրում	21 600,0	
6.	«Գեղարվեստի դպրոց» կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն և «Երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ներում էներգոխնայողական միջոցառումների իրականացում	18 500,0	
7.	Փողոցային լուսավորության համակարգերի արդիականացում, նոր համակարգերի կառուցում	73 900,0	
8.	Կանաչապատման աշխատանքներ	4 000,0	
9.	Սպիտակ համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքներ	2 000,0	
10.	Մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում	200 000,0	
11.	Ս.Հարություն եկեղեցու արտաքին ճարտարապետական լուսավորության անցկացում	12 125,0	
12.	Թորոսյան փողոց թիվ 26 բազմաբնակարան բնակելի շենքի հարևանությամբ հենապատի հիմնանորոգում և բակային տարածքի ասֆալտապատում	26 610, 0	
13.	Ուզբեկական և Տաշիր թաղամասերում փողոցային լուսավորության համակարգերի կառուցում	8 000.0	
Ընդամենը		577 815,08	
Ոլորտ 8.Կրթություն			
1.	Թիվ 2 Նախադպրոցական ուսումնական հաստատությունում «Սմարթ» դասասենյակի ստեղծում	3 100.0	
Ընդամենը		3 100,0	
Ընդհանուրը		580 915.08	-

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվությա ն աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտային նպատակ Ապահովել տեղական ինքնակառավարման իրականացումը Սպիտակ համայնքում, ունենալ բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցման արդյունավետ, մասնագիտացված, նպատակային և թափանցիկ համակարգ		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, 90% ✓ Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, 5 % ✓ Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, 34.71%			
Ծրագիր 1. Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում					
Ծրագրի նպատակ Բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ լավ	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմ	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Համայնքի աշխատակազմի աշխատողների թիվը, 50 2. Աշխատակիցների գործունեության արդյունավետության բարձրացում, 4% 3. Համայնքի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, 273 օր 4. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայությունը՝ այո 5. ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմ	2018թ. հունվար–դեկտեմբեր	Համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայություն

	բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, 4,5%				
	6. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը, 90%				
	7.Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, 5 օր				
Միջոցառումներ 1. Աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում 2. Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ 3. Համակարգչային ծառայությունների ձեռք բերում 4. Մասնագիտական ծառայությունների ձեռք բերում 5. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-գնումների համակարգողի գործունեության ապահովում 6. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական, մշակույթի, երիտասարդության, սպորտի և լրատվության բաժնի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատողի գործունեության ապահովում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի աշխատակազմի պահպանման ծախսեր՝ 104830.0 հազ. դրամ 2. Համայնքի աշխատակազմի աշխատակիցների թիվը՝ 50 3. Համայնքի գույքային հարկերի հաշվառման համակարգ՝ 1 4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք 5. Աշխատակազմում առկա համակարգչային սարքերի և սարքավորումների թիվը 34 6. Համայնքի պաշտոնական համացանցային կայք http://www.spitak.am/			
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում					
Ոլորտային նպատակ Նպաստել հայրենիքի պաշտպանության մակարդակի բարձրացմանը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ 1.Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանի վարումը – այո			
Ծրագիր 1. Զինապարտ քաղաքացիների զինվորական հաշվառման աշխատանքների աջակցում					
Ծրագրի նպատակ 1.Հստակեցնել նախազորակոչիկների, զորակոչիկների և պահեստազորում գտնվող քաղաքացիների քանակական ու որակական կազմը 2.Նպաստել համայնք-հասարակություն-բանակ կապի ամրապնդմանը:	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Հստակեցվել է նախազորակոչիկների, զորակոչիկների և պահեստազորում գտնվող քաղաքացիների քանակական ու որակական կազմը - բավարար	Ծրագրի գնահատման համակարգ ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմ	2018թ.	
Միջանկյալ արդյունք 1. Ցուցաբերվել է համապատասխան	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. 2002թ., 2003թ.ծնված նախազորակոչիկների	Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի	Համայնքի ղեկավար, աշխատակազմի 3	2018թ.	

տեղեկատվական աջակցություն Սպիտակի զինվորական կոմիսարիատին համայնքի 2002թ. ծնված պատանիների կցագրման նախապատրաստական աշխատանքները պատշաճ իրականացնելու համար:	զինվորական հաշվառում/փաստաթղթային և էլեկտրոնային եղանակով/ 2.2002թ.ծնված նախազորակոչիկների կցագրման մասին տեղեկանքի տրամադրում ՀՀ Լոռու մարզպետարան –մինչև 2018թ.ապրիլ ամիս: 3. 2003թ.ծնված նախազորակոչիկների տվյալների հավաքագրում և մուտքագրում-մինչև 2018թ.սեպտեմբեր ամիս	գնահատման համակարգ, ՄԳ տարեկան հաշվետվություն, բնակչության հաշվառման տվյալներ	աշխատակիցներ		
Միջոցառումներ (գործողություններ) 1.Աշխատանքային փոխհամագործակցություն Սպիտակի զինվորական կոմիսարիատի և թաղամասերում լիազոր-ներկայացուցիչների հետ: 2.Նախազորակոչիկների /2002թ. ծնվածներ/բնակչության և հաշվառման վայրի,թվաքանակի ճշտման աշխատանքներ: 3.Համայնքի 2002թ. ծնված նախազորակոչիկների կցագրման աշխատանքների աջակցում: 4.Համայնքի 2002թ. ծնված կցագրված պատանիների մասին տեղեկանքի տրամադրում ՀՀ Լոռու մարզպետարան: 5.Համայնքի 2003թ. ծնված պատանիների տվյալների նախապատրաստման և գրանցման աշխատանքներ: 6.Համայնքի 1968թ. ծնված զինապարտների տվյալների դուրս բերում՝16-50 տարեկան զինապատ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանից:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1.Աշխատակազմում զորակոչի հարցերով զբաղվող աշխատակիցների թիվը-3			
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում					
2018 թվականին արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:					
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ոլորտային նպատակ Իրականացնել քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցումը		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, 40%			
Ծրագիր 1. Սպիտակ համայնքի Ալ.Մանուկյան փողոց, թիվ 1,2,3,4,5,6,7,8,9,10, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 17, 17/1,17/2, 15/1 և 15/2, բազմաբնակարան շենքերի ջերմաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ և տանիքների արդիականացում, Շահումյան փողոց, թիվ 7 հասցեում ֆոտովոլտային կայանի կառուցում					
Ծրագրի նպատակ Բարձրացնել բազմաբնակարան	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ	Ծրագրի գնահատման	Համայնքի ղեկավար,	2018թ. հունվար-	Համապատասխան մարդկային,

բնակելի շենքերի էներգիայի խնայողությունը և ջերմարդյունավետությունը: Շահումյան փողոց, թիվ 7 հասցեում կառուցել ֆոտովոլտային կայան և արտադրած էլեկտրաէներգիայով ապահովել Սպիտակի համայնքապետարանի, Թիվ 2 ՆՈՒՀ-ի և փողոցային լուսավորության մի հատվածի էլեկտրամատակարարումը	✓ էներգիայի խնայողություն, ջերմարդյունավետություն, ✓ հարմարավետ և շահավետ պայմաններ համայքի բնակիչների համար ✓ Ջերմարդյունավետ և արդիական բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 6% ✓ 45կՎտ/ժ հզորությամբ ֆոտովոլտային կայան	համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Իրականացումը՝ Աշխատակազմի քաղաքաշինության , հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին, աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժին,	դեկտեմբեր	տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Էներգոխնայող և ջերմարդյունավետ բազմաբնակարան բնակելի շենքեր, ֆոտովոլտային կայանի արտադրված էլեկտրաէներգիայի միջոցով էլեկտրամատակարարում ապահոված Սպիտակի համայնքապետարանի վարչական շենք, Թիվ 2 ՆՈՒՀ և փողոցային լուսավորության մի հատված	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Փոխարինված և ջերմամեկուսացված տանիքների թիվը-14 ✓ Փոխարինված մուտքերի դռների թիվը –29 ✓ էներգախնայողություն՝ 15-30%, ✓ CO₂ արտանետումների կրճատում՝ 20% ✓ ֆոտովոլտային կայան հզորությունը - 45կՎտ/ժ ✓ արևային էներգիայի մարտկոցների թիվը- 139 հատ 2քմ ✓ Բնակիչների բավարարվածությունը ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումներից, 80% ✓ Ծրագրի իրականացման ժամկետը 1 տարի	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	«ՎԱԵՀԲ» ծրագրի էներգետիկ հարցերով դեկավար, «ՍԲՍԳ» ՀՈԱԿ, «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի» հիմնադրամ		

Միջոցառումներ 1. Ալ.Մանուկյան փողոց, թիվ 1,2,3,4,5,6,7,8,9,10, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 17, 17/1,17/2, 15/1 և 15/2, բազմաբնակարան շենքերի ջերմաարդյունավետությանն ուղղված միջոցառումների և տանիքների արդիականացման, Շահումյան փողոց, թիվ 7 հասցեում ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում 2. Ալ.Մանուկյան փողոց, թիվ 1,2,3,4,5,6,7,8,9,10, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 17, 17/1,17/2, 15/1 և 15/2, բազմաբնակարան շենքերի ջերմաարդյունավետությանն ուղղված միջոցառումների և տանիքների արդիականացման, Շահումյան փողոց, թիվ 7 հասցեում ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքների իրականացման վերահսկում 3. Ալ.Մանուկյան փողոց, թիվ 1,2,3,4,5,6,7,8,9,10, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 17, 17/1,17/2, 15/1 և 15/2, բազմաբնակարան շենքերի ջերմաարդյունավետությանն ուղղված միջոցառումների և տանիքների արդիականացման, Շահումյան փողոց, թիվ 7 հասցեում ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքների ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում	Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Համայնքի բյուջեի համաֆինանսավորում՝ 31 932 022 ՀՀ դրամ, ✓ ԵՄ ֆինանսավորում՝ 310 000 000 ՀՀ դրամ ✓ Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 2 ✓ Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 10 ✓ Նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ ֆոտովոլտային կայանի և յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար 3 օրինակ, ձեռքբերումը՝ համայնքի բյուջեի միջոցներով
---	--

Ծրագիր 2. Մշակույթի տան վերանորոգում, գազատարի կառուցում					
Ծրագրի նպատակ Շենքային պայմանների բարելավում, մշակույթի տան տեղակայված՝ գրադարանի, թանգարանի, ֆրանսիական լեզվի ուսուցման կենտրոնի, Սպիտակի տարածաշրջանի ՀՄՊ, աշխատանքի և ՆԳ վետերանների խորհուրդի բնականոն գործունեության ապահովում, բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Բարելավված շենքային պայամներ, մշակույթի տանը տեղակայված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների որակ 60%	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Բարելավված շենքային պայամներ, մշակույթի տանը տեղակայված կազմակերպությունների	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Վերանորոգված գրադարանի, գրապահոցի, ընթերցասրահի մակերեսը-451,62քմ	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ			

բնականոն գործունեություն	✓ վերանորոգված գմբեթների թիվը-1 ✓ վերանորոգված սանահնգույցների թիվը-2 ✓ կիսանկուղային հարկի վերանորոգված երթիկների մակերեսը-19,2քմ ✓ փոխարինված տանիքի մակերես-1760քմ ✓ տեղադրված մետաղական բազրիքների թիվը 4 ✓ նոր կառուցված գազատար-220 գծ ✓ Բնակիչների բավարարվածությունը ծրագրից-60% ✓ Ծրագրի իրականացման ժամկետը – 200 օր	ր, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ			
Միջոցառումներ 1. Մշակույթի տան վերանորոգման, գազատարի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի համաձայնեցում 2. Մշակույթի տան վերանորոգման, գազատարի կառուցման աշխատանքների վերահսկում 3. Մշակույթի տան վերանորոգման, գազատարի կառուցման աշխատանքների ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Համայնքի բյուջեի համաֆինանսավորում՝ 6 673 000 ՀՀ դրամ, ✓ Հայաստանի տարածքների զարգացման հիմնադրամ 75 111 000 ՀՀ դրամ, ✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 10 ✓ Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 2			
Ծրագիր 3. Ս.Ավետիսյան փողոց 17 բազմաբնակարան բնակելի շենքի բակի ասֆալտապատում, ջրահեռացում և լուսավորության համակարգերի կառուցում, Ս.Ավետիսյան փողոց 19Ա և 19Բ բազմաբնակարան բնակելի շենքերի բակի բարեկարգում, հենապատերի կառուցում և ասֆալտապատում, Այգեստան փողոցի 2-րդ նրբանցքի (Վարդանանց հիմնական դպրոցի հարևանությամբ) ասֆալտապատում					

Ծրագրի նպատակ Բարեկարգել բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքները, բարձրացնել ներհամայնքային ճանապարհների անցանելիության մակարդակը և ապահովել բնակիչների անվտանգ տեղաշարժը:	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ ✓ Բարեկարգ բակային տարածքների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 70 % ✓ Բարեկարգ ներհամայնքային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 10%	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Բարեկարգված բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներ, Ասֆալտապատ ներհամայնքային ճանապարհ, անվտանգ երթևեկություն	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Բարեկարգված բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքների թիվը 2 ✓ Բակային տարածքների ասֆալտապատ մակերեսը-2367քմ, ✓ Կառուցված հենապատերի թիվը 2 ✓ Տեղադրված հենասյուների (89x3 մմ-7 մ) թիվը-4 ✓ Տեղադրված լուսատուների թիվը -4 հատ 30Վտ (LED լամպով) ✓ Բնակիչների բավարարվածությունը ծրագրից-80% ✓ Ծրագրի իրականացման ժամկետը – 1 տարի	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ			
Միջոցառումներ 1. Ս.Ավետիսյան փողոց 17 բազմաբնակարան բնակելի շենքի բակի ասֆալտապատման, ջրահեռացման և լուսավորության համակարգերի կառուցման, Ս.Ավետիսյան փողոց 19Ա և 19Բ բազմաբնակարան բնակելի շենքերի բակի բարեկարգման, հենապատերի կառուցման և ասֆալտապատման, Այգեստան փողոցի 2-րդ նրբանցքի (Վարդանանց հիմնական դպրոցի հարևանությամբ) ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում 2. Ս.Ավետիսյան փողոց 17 բազմաբնակարան բնակելի շենքի բակի ասֆալտապատման, ջրահեռացման և լուսավորության համակարգերի կառուցման, Ս.Ավետիսյան փողոց 19Ա և 19Բ բազմաբնակարան բնակելի շենքերի բակի բարեկարգման, հենապատերի կառուցման և			Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Համայնքի բյուջեի համաֆինանսավորում՝ 25 784 000 ՀՀ դրամ, ✓ Սուբվենցիա ՀՀ պետական բյուջեից՝ 20 038 500 ՀՀ դրամ ✓ Նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար 3 օրինակ, ձեռքբերումը՝ համայնքի բյուջեի միջոցոցով ✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 10 ✓ Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 2		

ասֆալտապատման, Այգեստան փողոցի 2-րդ նրբանցքի (Վարդանանց հիմնական դպրոցի հարևանությամբ) ասֆալտապատման աշխատանքների վերահսկում 3. Ս.Ավետիսյան փողոց 17 բազմաբնակարան բնակելի շենքի բակի ասֆալտապատման, ջրահեռացման և լուսավորության համակարգերի կառուցման, Ս.Ավետիսյան փողոց 19Ա և 19Բ բազմաբնակարան բնակելի շենքերի բակի բարեկարգման, հենապատերի կառուցման և ասֆալտապատման, Այգեստան փողոցի 2-րդ նրբանցքի (Վարդանանց հիմնական դպրոցի հարևանությամբ) ասֆալտապատման աշխատանքների ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում							
Ծրագիր 4. Մարզադպրոցի հին մասնաշենքի վերանորոգում							
Ծրագրի նպատակ Մարզական պարապմունքների համար նպաստավոր պայմանների ստեղծում		Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ ✓ Բարելավված շենքային պայմաններ ✓ Մարզադպրոցի սաների թվի ավելացում		Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության,	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Բարելավվում են շենքային պայմանները, որը կնպաստի մարզական պարապմունքների անցկացմանը		Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Մարզադպրոցի շենքի վերանորոգում՝ 1 ✓ Սաների թվի ավելացում՝ 70 ✓ Ծրագրի իրականացման ժամկետը՝ 1 տարի		Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին		
Միջոցառումներ 1. Մարզադպրոցի տանիքի, առաստաղի, հատակների, հանդերձարանի, դահլիճի, բաղնիքի և միջանցքների վերանորոգում, ջեռուցման համակարգի տեղադրում				Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Հայ-ամերիկյան «Ծնողագուրկ և հաշմանդամ երեխաների Սուրբ Ծնունդ» բարեգործական հիմնադրամի միջոցներ՝ 27921.593 հազար դրամ ✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 10			
Ծրագիր 5. Սպիտակ համայնքի քաղաքային զբոսայգու հուշարձանի և բեմի հանդերձարանի վերանորոգում							

Ծրագրի նպատակ Բարելավել քաղաքային զբոսայգու մատուցած ծառայության որակը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Համայնքի բնակչությանը մատուցվող՝ քաղաքային զբոսայգու ծառայության որակը՝ լավ	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համայնքի բյուջեից անհրաժեշտ ֆինանսական միջոցները ժամանակին հատկացվում են
Միջանկյալ արդյունք 1 Բարելավվում է համայնքի բնակչությանը մատուցվող՝ քաղաքային զբոսայգու ծառայության որակը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Զբոսայգու վիճակը, լավ ✓ Աշխատանքների իրականացման ժամկետը, 1 ամիս ✓ Բնակչության բավարարվածության աստիճանը 70%	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ			Համապատասխան ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
Միջոցառումներ ✓ Քաղաքային զբոսայգու տարածքում գտնվող հուշարձանի վերանորոգում ✓ Բեմի հանդերձարանի վերանորոգում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Զբոսայգու հուշարձանի և բեմի հանդերձարանի վերանորոգման ծախսեր՝ 3000.0 հազ. դրամ			
Ծրագիր 6. Համայնքի տարածքում աղբահանության աշխատանքների իրականացում					
Ծրագրի նպատակ Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը.	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Համայնքի տարածքի մաքրություն՝ լավ Աղբահանության պատշաճ իրականացում՝ լավ	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Համայնքի տարածքի մաքրություն, աղբահանության պատշաճ իրականացում	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Աղբահանություն իրականացնող աշխատակիցների թիվը 4 ✓ Աղբահանություն իրականացնող ծառայության մատուցման	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

	հաճախականությունը (շաբաթվա կտրվածքով), 6 օր ✓ Ծրագրի իրականացման ժամկետը, 1 տարի ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանության ծառայությունից, 80%	կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ			
Միջոցառումներ (գործողություններ) ✓ Աղբահանության ծառայության իրականացում ✓ Կենցաղային աղբի տեղափոխում 8022խմ ✓ Ոչ կենցաղային աղբի տեղափոխում 3170խմ ✓ Խոշոր եզրաչափերի աղբի տեղափոխում 95խմ ✓ Շինարարական աղբի տեղափոխում 140խմ ✓ Աղբավայրի խնամք-աղբի հարթեցում, հողով ծածկում 12222,7խմ		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսերը աղբահանության համար 17900.0 հազ. դրամ ✓ Աղբահանություն իրականացնող աշխատակիցների թիվը 4 ✓ Աղբատար մեքենաների թիվը 2			
Ծրագիր 7. Համայնքի տարածքում սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում					
Ծրագրի նպատակ Ապահովել համայնքի տարածքի մաքրությունը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Համայնքի տարածքի մաքրությունը, սանիտարահիգիենիկ պայմաններ լավ	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ		2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Ապահովել համայնքի տարածքի մաքրությունը, ստեղծել սանիտարահիգիենիկ բավարար պայմաններ	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը 9 ✓ Սանիտարական մաքրում իրականացնող ծառայության մատուցման հաճախականությունը (շաբաթվա կտրվածքով), 6 օր ✓ Ծրագրի իրականացման ժամկետը, 1 տարի ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը սանիտարական մաքրման ծառայությունից, 80%	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին		Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

Միջոցառումներ (գործողություններ)

- ✓ Սանիտարական մաքրման ծառայության իրականացում
- ✓ Սանիտարական մաքրման տարածքներ 5276550 քմ
- ✓ Մաքրվող տարածքներ մեքենայական վազման աշխատանքներ ջրցան մեքենայով(5,2կմ օրական վազման օրերի քանակը 100 օր)
- ✓ Ավելվածքի տեղափոխում 577,74 խմ
- ✓ Անձրևաջրատար առուների մաքրում 21 անգամ 3610զմ
- ✓ Անձրևաջրատար առուների և քաղաքային զբոսայգու ջրավազանի մաքրումից առաջացած աղբի, տիղմի տեղափոխում 229խմ

Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)

- ✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսերը սանիտարական մաքրման համար 22100.0 հազ. դրամ
- ✓ Սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը 8

Ծրագիր 8. Համայնքի տարածքում ձյան մաքրման աշխատանքների իրականացում					
Ծրագրի նպատակ Համայնքի տարածքում ապահովել մարկանց և տրանսպորտի անվտանգ անցուղարձը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Երթևեկության ապահով կազմակերպում՝ լավ Մարդկանց անվտանգ անցուղարձ՝ լավ	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Համայնքային ենթակառուցվածքներից օգտվելու համար բնակչության անվտանգության ապահովում	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Ծրագրի իրականացման ժամկետը, 1 տարի ✓ Ձյան մաքրման ենթակա տարածքների մակերեսը, 139810քմ ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը ձյան մաքրման աշխատանքներից, 80% ✓ Աշխատակիցների թիվը 10	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ (գործողություններ) ✓ Ձյան մաքրման իրականացում ✓ Ձյան մեկանգամյա մաքրում մեքենայով 124700քմ ✓ Ձյան մեկանգամյամաքրում ձեռքով 15110քմ ✓ Աղի, ավազի մեկանգամյա ցանում 82200քմ		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսերը ձյան մաքրման համար՝ 5000,0 հազ. դրամ			
Ծրագիր 9. Համայնքում նոր աղբարկղների ձեռքբերում և հների փոխարինում					
Ծրագրի նպատակ Նոր աղբարկղների տեղադրում և հների փոխարինում նորերով	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Տարածքների աղտոտման վերացումը՝ լավ աղբակույների վերացումը՝ լավ	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության,	2018թ.	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

